ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ՀԱՅԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

ԲԱԹՈՒՄԻ,— 29 դեկտեմբերի (ՀՀԳ-ի հատ. թղթ.).— «Պրեդա» ջերմանավով Ֆրանսիայից Բաթումի ժամանեց հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող հայերի մի նոր մեծ խումբ։ Ընդամենը ժամանել է 2.059 մարդ։ Դրանք հիմնականում բանվոր տնայնագործներ են։ Ժամանածներին Բաթումիի նավահանգստում ցույց տրվեց ջերմ ընդունելություն։ Օտարերկրյա հայերին ընդունող Բաթումիի կայանի պետ ընկ. Միրիմանյանը ողջունեց և շնորհավորեց նրանց՝ բարեհաջող կերպով Սովետական Միություն ժամանելու առթիվ։ Պատասխան ճառով հանդես եկավ քարավանի ղեկավար Հ. Մարտիկյանը։

— Ողջ դնելով սովետական հողը,— ասաց նա,— մենք մեր սիրո, երախտագիտության առաջին խոսքերը ուղղում ենք մեր դարաշրջանի մեծագույն մարդուն՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին, որը մեզ ազատագրեց կապիտալիստական ստրկությունից և դուրս բերեց լուսավոր, բերկրալից ուղի։ Տասնյակ տարիներ մենք սպասում էինք հայրենիք վերադառնալուն։ Այդ բերկրալից օրը եկավ։ Այսուհետև մենք կապրենք այնպես, ինչպես ապրում են բոլոր սովետական մարդիկ՝ ազատ և երջանիկ ու մեր բոլոր ուժերը կնվիրենք մեր հայրենիքի հետագա բարգավաճման գործին։ Թող երկա՜ր տարիներ ապրի և կեցցե՜ մեր սիրելի հայր և ուսուցիչ մեծ Ստալինը։

Հռետորի այս խոսքերը ծածկվում են ուռռա բացականչություններով և ծափահարություններով։ Հազարավոր մարդիկ միասնական մղումով երգում են Հայկական ՍՍՌ պետական հիմնը։ Նավահանգստում երկար ժամանակ հնչում են ողջույնի բացականչություններ ի պատիվ սովետական կառավարության, բոլշևիկյան պարտիայի, ի պատիվ մեծ Ստալինի։

***

Ֆրանսիայից ներգաղթած հայերի երկրորդ քարավանի առաջին խումբը հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց հունվարի 8-ին, ժամը 12-ին։

Երևանի կայարանում հայրենադարձներին դիմավորեցին Քաղաքային Սովետի և Ներգաղթի Կոմիտեի ներկայացուցիչները, ինչպես նաև մեծ թվով բարեկամներ ու ծանոթներ։

(ՀՀԳ)

***

Հունվարի 13-ին հատուկ գնացքով Երևան ժամանեց Ֆրանսիայից իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադարձող հայերի նոր խումբը։

Երևանի կայարանում ժամանածներին դիմավորեցին արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի, Քաղաքային Սովետի և ռայոնական Սովետների ներկայացուցիչները։

Ժամանածների մեջ կան շատ բանվորներ, արվեստի աշխատողներ և ժուռնալիստներ։

Հայրենիք են վերադարձել 152 ընտանիք. սրանցից 39 ընտանիք տեղավորվելու են Բերիայի անվան ռայոնում, 9-ը՝ Քաջարանում, իսկ մնացածները՝ Երևանում։

(ՀՀԳ)

ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ

Օրերս Չինաստանից Սովետական Հայաստան են վերադարձել մի խումբ հայեր՝ թվով 16 մարդ։ Հայրենադարձներն ունեն տս բրեր մասնագիտություններ ու արհեստներ։ Նրանք բոլորն էլ Երևանում տեղավորվում են համապատասխան աշխատանքի։

(ՀՀԳ)